

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը  
հայտարարում է ներքին մրցույթ քաղաքացիական ծառայության թափուր  
պաշտոն զբաղեցնելու համար

21/07/2022թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը (Այսուհետ՝ Հանձնաժողով) հայտարարում է ներքին մրցույթ Հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վերլուծության վարչության համակարգչային համակարգերի և ցանցերի ճարտարագետ (ծածկագիր՝ 42-26.2-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Ներքին մրցույթին կարող են մասնակցել համապատասխան մարմնի (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի) հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վերլուծության վարչության համակարգչային համակարգերի և ցանցերի ճարտարագետ (ծածկագիր՝ 42-26.2-Մ2-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացվում են առցանց՝ <https://cso.gov.am/internal-external-competitions> հղումով՝ քսանչորսժամյա ռեժիմով, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝

1. դիմում, /առցանց/
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտի լուսանկար (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսանկար (ներ)),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթ(եր)ի լուսանկար(ներ),
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի լուսանկար,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի լուսանկար կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսանկար,
6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են **2022 թվականի հուլիսի 22-ից մինչև 2022 թվականի հուլիսի 27-ը ներառյալ**:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի **2022 թվականի օգոստոսի 29-ին՝ ժամը 14:30-ին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում (ք. Երևան, Գ.Քոչար 21ա)**:

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **2022 թվականի օգոստոսի 31-ին՝ ժամը 14:30-ին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում (ք. Երևան, Գ.Քոչար 21ա)**:

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափերով:

Հիմնական աշխատավարձը 212 309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

## **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**

«Սահմանադրություն. հոդվածներ՝ 7, 48, 88, 89, 91, 92, 93, 110, 124, 181, 194, 195  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723>

«Հնտրական օրենսգիրք, հոդվածներ՝ 9, 11, 16, 18, 19, 24, 39, 42, 43, 44, 52, 62, 72, 108, 141  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165077>

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 3, 8  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164931>

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 3, 8  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132745>

«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդվածներ՝ 2, 13, 35  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=158632>

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 6, 7, 9-10, 12, 17, 18, 20, 21, 24, 27, 30  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910>

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 4, 28, 31, 32  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141524>

«ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165224>

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի N 32-Ն որոշում  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161345>

## **ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ**

<https://cso.gov.am/sections/competence>

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը պետք է ներկայացնի էլեկտրոնային տարբերակով՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում ([www.cso.gov.am](http://www.cso.gov.am)) առցանց լրացնելով դիմումը և լրացված դիմումին կցելով անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճեններն ու լուսանկարը: Լրացուցիչ հարցերի համար՝ էլեկտրոնային հասցե՝ [BalayanG@elections.am](mailto:BalayanG@elections.am), հեռ. 010545247: